



Այբ կրթական  
հիմնադրամ

# ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

2021 թ.

# ՀԻՄ կազմ և լիազորությունների ժամկետ

## Դասային խմբեր



Հիմ լիազորությունների  
ժամկետը 2 տարի է:



Հիմ-ն ունի 7 անդամ:  
Ձևավորվում է 3 դասային  
խմբերից



Նախագահին ընտրվում է Հիմ  
կազմից՝ ձայների  
մեծամասնությամբ

Ռազմավարական հովանավոր  
առավ. 1 անդամ



Շարունակական հովանավոր  
ֆինանսական միջոցների  
ներգրավման խոստմամբ  
առավ. 4 անդամ



Շարունակական հովանավոր  
առավ. 2 անդամ



# Ռազմավարական հոլանսավոր



Հիմնադրամին և/կամ «Այբ կրթական հանգույց»  
հիմնադրամին վերջիններիս հիմնադրման պահից  
նվիրատվությունների ընդհանուր գումարը պետք է  
գերազանցի **\$1.000.000-ը**



Եթե խմբի թեկնածուի՝ որպես ՀԻՄ անդամ ընտրվելու դեպքում նրա ֆիզիկական  
ներկայությունը ՀԻՄ նիստերին անհնար է, նա իրավունք ունի լիազորել այլ անձի իր անունից, ի  
շահ իրեն, քվեարկելու ու որոշումներ կայացնելու իրավասությամբ մասնակցելու ՀԻՄ  
նիստերին: Լիազորված անձի մասին տեղեկատվությունը տրամադրվում է իր դասային խմբի  
անդամներին և ՀԻՄ-ին մինչև ընտրությունների մեկնարկը և չի կարող փոփոխվել ընտրվելու  
դեպքում՝ ՀԻՄ-ի գործունեության ողջ ընթացքում



# Շարունակական հովանավոր՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ



Գումարային սվիրատվությունները «Այբ» համակարգի կառույցներին **01/2019-10/2021** ժամանակահատվածում պետք է լինեն նվազագույնը **\$24.000**



Խմբից առաջադրված թեկնածուն պարտավորվում է ՀԽ գործունեության 2 տարիների ընթացքում Հիմնադրամին սվիրատվություն անել ոչ պակաս, քան **\$24.000**



Խմբում իրենց անդամությունը պահպանելու համար անդամները պետք է շարունակեն սվիրատվություններ կատարել «Այբ» համակարգի կառույցներին՝ **2** տարվա համար նվազագույնը **\$24.000**-ի չափով





# Շարունակական հովանավոր՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ



Խմբում որպես քվեարկող ընդգրկվելու համար կարող են հավակնել նաև համայնքի նոր անդամներ: Թեկնածուները պարտավորվում են ՀԽ-ի գործունեության 2 տարվա ընթացքում «Այբ» համակարգի կառույցներին նվիրատվություն անել ոչ պակաս, քան **\$24.000**



Խմբում որպես քվեարկող համայնքի նոր անդամի ընդգրկելու վերաբերյալ ՀԽ-ն կայացնում է անհատական որոշում: Այս հարցով ՀԽ-ի որոշումը պարզաբանման և մեկնաբանության ենթակա չէ: Նվիրատվության պարտավորություն ստանձնելու կամ կատարելու փաստը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է խմբում որպես քվեարկող ընդգրկվելու համար: Տվյալ դասային խմբում այս կարգով ներգրավված համայնքի նոր անդամները չեն կարող առաջադրվել որպես իրենց դասային խմբից ՀԽ-ի անդամության թեկնածուներ՝ ՀԽ-ի գործունեության իրենց միանալու առաջին 2 տարիների ընթացքում:



Ֆինանսական պարտավորությունը ամրագրվում է պայմանագրով: Նվիրատվության ֆինանսական աղբյուրը չպետք է լինի վարկային և/կամ փոխառու միջոց՝ թե՛ Հիմնադրամի, թե՛ հովանավորի համար, և միջոցները պետք ուղղվեն Հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացմանը



# Շարունակական հովանավոր



Գումարային նվիրատվությունները «Այբ» համակարգի կառույցներին **01/2019-10/2021** ժամանակահատվածում պետք է լինեն նվազագույնը **\$4.000**



Խմբում իրենց անդամությունը պահպանելու համար անդամները պետք է շարունակեն նվիրատվություններ կատարել «Այբ» համակարգի կառույցներին՝ **2** տարվա համար նվազագույնը **\$4.000**-ի չափով



Անդամությունը պահպանելու դեպքում ֆինանսական պարտավորությունն ամրագրվում է պայմանագրով:  
Նվիրատվության ֆինանսական աղբյուրը չպետք է լինի վարկային և/կամ փոխառու միջոց՝ թե՛ Հիմնադրամի, թե՛ հովանավորի համար



# ՀԻՍ ձևավորման գործընթաց

Հիս դասային խմբերում որպես  
ՔՎԵԱՐԿՈՂ ընդգրկումը՝  
սեփական նախաձեռնությամբ և  
Հիս հաստատմամբ

Հիս անդամ չեն կարող լինել  
Հիմնադրամի այլ ղեկավար  
մարմինների  
անդամները/ներկայացուցիչ  
ները

Կա հնարավորություն  
լրացնելու կոնկրետ դասային  
խմբում որպես քվեարկող  
ընդգրկվելու համար  
պակասող գումարը՝ մինչև  
**հոկտեմբերի 24-ը**

Եթե թեկնածուն բավարարում է 1 կամ  
ավելի դասային խմբերին ներկայացվող  
պահանջների, որպես քվեարկող  
մասնակցում է դասային յուրաքանչյուր  
խմբի կազմում, իսկ որպես ընտրող՝ 1  
դասային խմբում՝ իր նախընտրությամբ

Յուրաքանչյուր դասային  
խմբի շրջանակներում  
քվեարկության  
մասնակիցների  
վերջնական կազմը  
հաստատում է Հիս-ն

Յուրաքանչյուր դասային  
խմբում թեկնածուները կարող  
են ինքնաառաջադրվել կամ  
առաջադրվել  
համապատասխան դասային  
խմբի որևէ քվեարկողի կողմից՝  
**նոյեմբերի 1-ից 6-ը**

# ՀԻՍ ձևավորման գործընթաց

Հիմնադրամի կայքում  
հրապարակվում են բոլոր  
անհրաժեշտ  
փաստաթղթերը: Ավելին՝  
[Մեր մասին \(ayb.am\)](http://ayb.am)

Ներկայացվում է  
ստորագրված դիմում՝ ՀԻՍ  
որևէ դասային խմբում  
որպես ՔՎԵԱՐԿՈՂ  
ընդգրկվելու մասին՝  
մինչև **հոկտեմբերի 22-ը**

Յուրաքանչյուր դասային  
խումբ ստանում է իր  
անդամների կազմը:  
Խմբերը կարող են  
կազմակերպել ներքին  
քննարկումներ

01

02

03

04

05

06

Տեղեկացվում է լայն համայնքը:  
Ուղարկվում են  
Նվիրատվությունների  
անհատական  
պատմությունները՝  
հաստատման:  
Նվիրատվությունները՝  
դրամական և բնաիրային  
արտահայտությամբ:

Անհատական  
Նվիրատվությունների  
գումարի հաստատումը՝  
մինչև **հոկտեմբերի 10-ը**

ՀԻՍ-ն հաստատում է  
յուրաքանչյուր դասային  
խմբում ՔՎԵԱՐԿՈՂՆԵՐԻ  
ցանկը՝ ստուգելով  
չափանիշներին  
համապատասխանությո  
ւնը – մինչև **հոկտեմբերի  
31-ը**





Այբ կրթական  
հիմնադրամ

# ՀԽ ձևավորման գործընթաց



Ինքաառաջադրված կամ խմբի անդամների կողմից առաջադրված յուրաքանչյուր թեկնածու Հիմնադրամի կայքից ծանոթանում է բոլոր փաստաթղթերին



Ռեյտինգային ընտրություններ՝ **նոյեմբերի 21-28-ը**



Ընտրությունների արդյունքների ամփոփում և տեղեկացում գործող ՀԽ-ին և առաջադրված թեկնածուներին



Յուրաքանչյուր ընտրված թեկնածու գրավոր ընդունում է կանոնակարգի, Էթիկայի կանոնների բոլոր դրույթները՝ ստորագրելով դրանց՝ իրեն հանձնված օրինակը



Գործող ՀԽ-ն հաստատում է նոր ՀԽ կազմը՝ հիմք ընդունելով ընտրությունների արդյունքները, թեկնածուի կողմից ստորագրված փաստաթղթերը, ստորագրված նվիրատվության պայմանագրերը

**12/12/2021 թ.**

**Նոր ՀԽ  
աշխատանքի  
սկիզբ**

# Այլ կարգավորումներ

## Ռեյտինգային ընտրություններ

- Բոլոր քվեարկողներն ունեն այնքան ձայն, որքան տեղեր են նախատեսված այդ դասային խմբի համար ՅԽ կազմում և բաշխում են իրենց ձայները տարբեր թեկնածուների միջև՝ յուրաքանչյուր թեկնածուին ոչ ավել, քան մեկ ձայն համամասնությամբ:
- Չաղթող են ճանաչվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուները:
- Ռեյտինգային ընտրությունը միափուլ է, փակ:
- Միևնույն դասի շրջանակներում հավասար ձայներ հավաքած թեկնածուների միջև կազմակերպվում է վիճակահանություն
- Չիմնադրամի ներդասային ընտրությունների կանոնակարգը հաստատված է Չիմնադրամի ՅԽ կողմից: Դրա հետագա փոփոխությունները կատարվում են Չիմնադրամի ՅԽ որոշմամբ:
- Դասային խմբերից յուրաքանչյուրով առաջադրվող թեկնածուն տեղեկացված է առ այն, որ և որպես քվեարկող, և որպես թեկնածու առաջադրման/դիմումի ժամկետները խախտելը հանգեցնում է համապատասխան ցուցակում չընդգրմանը, որը ենթակա չէ բողոքարկման:
- Կանոնակարգով չկարգավորված հարցերը լուծվում են Չիմնադրամի կանոնադրությանը և ՅԽ որոշումների համաձայն:
- Կանոնակարգով և Էթիկայի կանոններով սահմանված դրույթները և պարտականությունները ՅԽ անդամի կողմից խախտելը կարող է հանգեցնել ՅԽ տվյալ անդամի հեռացմանը ՅԽ կազմից:





Այբ կրթական  
հիմնադրամ

# ՇՆՈՐՀԱԿԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ձեր հարցերը կարող եք ուղղել Հիմնադրամի գործադիր տնօրեն Սոնա Կոշեցյանին



[Sona\\_k@ayb.am](mailto:Sona_k@ayb.am)